ՎԱՀՐԱՄ ԼԱԼԱՅԱՆ

ԻՆԸ ԵՐԱՆԻՆԵՐԸ ՀԱՅ ԽՈՐՀՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՄԵՋ

Արեւելաքրիստոնեական խորհրդապաշտության առավել ընդգրկուն ընկալումն անհնարին կլիներ առանց ինը երանիների խորհրդապաշտական մեկնաբանության: «Լեռան քարոզը» կամ ինը երանիները Եկեղեցու Ս. հայրերն անվանել են «Ավետարան ավետարանի մեջ»[1], քանզի նրա մեջ արտացոլված է Քրիստոսի ողջ վարդապետությունը, մարդու հոգեւոր վերընթացի նրբագույն ծալքերը, հոգեբարոյական կատարելության բոլոր աստիճանները, սրբության ճանապարհի տարաբնույթ հանգրվանները, Աստծո հետ միավորման եւ աստվածացման խորախորհուրդ իրականությունը:

«Եւ տեսնելով բազմութիւնը՝ բարձրացաւ լերան վրայ…» (Մատթ. Ե, 1): Լեռը նվիրական խորհրդանիշ է Աստվածաբանության մեջ եւ լեռան խորհրդի բացահայտումը չափազանց կարեւոր խորհրդապաշտության համար:

Ինչպես Աստվածաբանության, այնպես էլ խորհրդապաշտության համար մեծ նշանակություն է ստանում Մովսեսի անցած ճանապարհի խորհրդի բացահայտումը՝ Եգիպտոս (Կարմիր ծովով) – Սինա լեռ - անապատ - Ավետյաց երկիր: Աստվածաշնչյան պատմության մեջ Եգիպտոսը հրեաների համար (Հովսեփից հետո) ստրկության, բռնության եւ տառապանքի վայր էր մինչեւ «Ելքը», իսկ աստվածաբանական առումով, համաձայն մեկնաբանական ավանդույթի, այն սատանայի կողմից գերված մարդկային բնության վիճակն է արտացոլում, որը բռնադատվում է հոգեկան եւ մարմնական մեղքերից: Եվ փարավոնը, որ տարբեր ձեւերով խոչընդոտում էր «Ելքին», խորհրդանշում է Սատանային: Վերջինս մարդկային բնության մեջ առկա կրքերի ձգողական զորությունն է ներկայացնում, առանց որից ազատագրվելու անհնար է «ազատության լեռը» բարձրանալ եւ ճշմարտապես Եկեղեցի մտնել: Պողոս առաքյալը, Կարմիր ծովով Մովսեսի առաջնորդությամբ հրեաների անցումը նկատելով որպես Եկեղեցու մկրտության նախօրինակ, ամպը եւ վեմը դիտում էր իբրեւ Ս. Հոգու եւ Քրիստոսի խորհրդանիշեր, որից սնվելով՝ հոգեպես զորանում էին (հմմտ. Ա. Կորնթ. Ժ, 1-5): Հիշարժան է նաեւ այն, որ այս Ելքի նախապայմանն անմեղ զառան զոհաբերումն էր ու նրա արյան նշանը: Եվ այս ամենը կենսական էր միայն հավատի առկայությամբ: Եկեղեցում մկրտության ժամանակ հստակորեն պահանջվում են այս «նախապայմանները»: Երբ Հին Ուխտում Մովսեսն պատրաստվում էր Իսրայելը առաջնորդելու Ավետյաց երկիր, Աստծո հրեշտակը Սինա լեռան վրա նրան է փոխանցում տասը պատվիրանները եւ մյուս կրոնաբարոյական օրենքները, որոնց կատարման դեպքում միայն այս ժողովուրդը կարող էր Աստծունը համարվել:

Նորկտակարանյան դիտանկյունից՝ Քրիստոս, հաղթելով Սատանային, Իր անունը կրող ժողովրդին, ինը երանիների սանդուղքով առաջնորդում է դեպի Երկնային Արքայություն: Սակայն այս ճանապարհը որոշակի ջանքեր ու ճիգեր է պահանջում, որ Հին Կտա-

1 Տե՛ս **Լ. Սարգսյան**, Երանիներ, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Եր., 1999, էջ 323:

կարանում դրսեւորվել է անապատի փորձությամբ: Այսինքն՝ միշտ վտանգ կա, որ, եթե ոչ մարմնով, ապա մտքով մարդը վերադառնա այս կյանքի «Եգիպտոս»՝ փնտրելու կրքեր, ցանկություններ եւ ունայն նպատակներ: Այս դեպքում, ըստ Ս. Գրիգոր Տաթեւացու. «պարտ է փախչել ի վայրաքարշ ախտէ մարմնական եւ զմիտս հեռացուցանել յախտաւոր խորհրդոց»[2]: Այս ճանապարհը մտքի ասպվածճանաչողական վերընթացն է, որ հասցնում է խորհրդական ասպվածտեսության լեռնագագաթներ: Խորհրդական ասպվածտեսությունն Աստծո հետ միավորման բարձրակետում, երբ միտքը ընկղմվում է «Ասպվածային Մեգի» մեջ, վերադառնում է դեպի հավատի միեղեն շնորհական տեսություն, որովհետեւ թոթափվում է ինքն իրենից եւ եղական բնության կապանքներից՝ «զի խորհրդով եւ հաւատով տեսանի եւ ո՛չ քննութեամբ մտաց»[3]: Աստծո հետ միավորման եւ ասպվածացման այս վերելքն «Արեւելաքրիստոնեական Խորհրդապաշտության վերացարկված մտահայեցողական»[4] ուղղությունն է ներկայացնում, երբ վերացարկման բարձրակետում «Խորհրդական անգիտության» թաքնախորհուրդ լռության մեգով պատված մարդկային միտքը միավորվում է Անմատույց Լույսի մեջ Բնակվողի հետ (Ամմտ. Ա. Տիմ. Զ 16):

Խորհրդական Ասպվածաբանության համար Աստծո հետ միավորման ձգտումը պայմանավորված է նաեւ արարածների եւ «Ասպվածային Հարացույցի»[5] միջեւ առկա գոյաբանական կապով: Վերջինս արարչության եւ արարածների մտահղացման Գիրքն է, որտեղ Ս. Երրորդությունը, մինչեւ արարում, նախապես հղացել է ամբողջ արարչությունը՝ անժամանակ վիճակից մինչեւ ժամանակների վախճան: Այսինքն՝ Հարացույցով է պատճառաբանված, նախասահմանված եւ նախատեսված մինչեւ Վերջին Դատաստան բոլոր արարածների մուտքն արարչություն: Այս առումով մարդու «վերադարձը» դեպի իր հարացուցային նախասկիզբ կամ նախապատճառ եւս Աստծո հետ միավորման հայեցողական կերպերից է:

Իսկ ինը երանիների սանդուղքով Երկնքի Արքայության ճանապարհին պետք է հաղթահարվեն հավատի, ապաշխարության եւ առաքինության բարձունքները.

ա. - «Որք ի մեղս վարակեալ իցեն, ոչ իմանան զազրութիւն գործոցն, պարտ է ելանել ի լեառն ապաշխարութեան եւ ճանաչել զծանրութիւն մեղացն»[6]:

բ. - «որ զպայծառ լոյսն եւ ցրստակ օդ խնդրէ, ի գլուխ լերինն ելանէ, այսպէս, որ զպայծառ լոյսն ճշմարիտ, եւ զիմաստութիւն կամի ուսանել, ի լեռն հաւատոյ եւ առաքինի գործոց պարտ է բարձրանալ»[7]:

գ. - «Զի որ կամին ի հեռաւոր ինչ տեսանել, թողուն ըզձորն եւ ի լեառն ելանեն, այսպէս եւ որք կամին զդրախտն իմանալի նկատել, թե ուստի ելինն, պարտ է ի լեառն առաքինութեան ելանել եւ ապա ըստ բարեաց գործ հայել»[8]:

Ապաշխարության դարձն սկսվում է անառակ որդու սրտում, երբ նա խորապես գիտակցում է ու ապրում մեղքի ստրկության ողջ ծանրությունը, դատապարտվում իր խղճի կողմից

2 **Գրիգոր Տաթեւացի,** Յաղագս Թ-երանութեան, ՄՄ. ձեռ. հմր 6102, թ. 66ա:

3 Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի,** Գիրք Հարցմանց, էջ 123:

4 Տե՛ս **П. Минин,** Главные направления древне-церковной мистики, Мистическое Богословие, Киев, 1991, էջ 343.

5 Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի,** Գիրք Հարցմանց, էջ 112:

6 **Գրիգոր Տաթեւացի,** Յաղագս Թ-երանութեան, թ. 66ա:

7 Անդ, 66ա:

8 Անդ:

(«Աստծո ձայն»), քանի որ Հորը դավաճանելով, Նրա թշնամուն՝ Սատանային ու մեղքին էր ծառայություն մատուցում:

Եվ նա որոշում է ազատվել չարի ծառայությունից եւ Հոր (Աստծո) Տուն (Եկեղեցի) վերադառնալ: Սակայն այդքան էլ հեշտ չէ իմանալի փարավոնի ձեռքից ազատվելը, եթե Որդին չազատի. «Եթէ Որդին ձեզ ազատի, ճշմարտապէս ազատ կը լինէք» (Յովհ. Ը 36): «Եւ կը ճանաչէք Ճշմարտութիւնը, եւ Ճշմարտութիւնը ձեզ կազատի» (Յովհ. Ը 32):

Այսինքն՝ այս ուղին ներքին ազատագրման ընթացք է, որն իրագործվում է հավատքի զորությամբ: Իսկ այդ զորությունը, որպես ողորմություն, տրվում է Աստծուց, երբ Նա տեսնում է անառակ որդու ներքին պայքարը՝ անսասան որոշումը՝ ապելու մեղքը եւ փնտրելու Աստծո ճանապարհը:

Հավատքը ձեռք է բերվում Աստծո հայտնությամբ, եւ այն Նրա սիրուց բխած մի շնորհ է. «Ով Ինձ սիրում է, պիտի սիրուի Իմ Հորից. Ես էլ նրան պիտի սիրեմ եւ Ինձ պիտի յայտնեմ նրան» (Յովհ. ԺԴ 21): «Ապաշխարության Լեռան» վրա հաստատվելու համար բավարար չեն (թեեւ չափազանց կարեւոր է)սրտի զղջումն ու ներքին ցավի փառապանքը, այլեւ փրկչական Խաչի վրա Աստծո Որդու չարչարանքով թափված քավչարար արյան սրբագործող զորության բացահայտումը. «Ահա Գառն Աստուծոյ, որ վերացնում է աշխարհի մեղքը» (Յովհ. Ա 29): Արդեն Մկրտությամբ եւ Դրոշմով, հոգեւորապես ծնվելով, հոգին սրբվում է ադամական կամ սկզբնական մեղքից եւ դառնում Ս. Երրորդության բնակարան: Իսկ ներգործական մեղքերից (մկրտությունից հետո գործած մեղքեր՝ գիտությամբ կամ անգիտությամբ) մաքրվում է «ապաշխարության խորհրդով»[9]:

Ս. Հաղորդության ժամանակ, առանց Ապաշխարության կարգն անցնելու, անձը չի կարող հաղորդվել Տիրոջ Մարմնի եւ Արյան հետ ու արդարանալ: Այսինքն՝ առանց ապաշխարության բարձունքը հաղթահարելու, անհնար է առաքինության լեռան կատարին Քրիստոսի հետ սիրո միավորումը: Պողոս առաքյալը հարսի եւ փեսայի սիրո միությունը դիտում էր որպես Քրիստոսի եւ Իր Եկեղեցու նվիրական միության խորհրդանիշ (հմմտ. Եփես. Ե 32): Արեւելաքրիստոնեական Խորհրդապաշտության «բարոյագործնական ուղղությունն»[10] այս խորհուրդը մեկնաբանել է որպես Քրիստոսի եւ Իր Եկեղեցու մի անդամի՝ մարդկային հոգու սիրո միություն: Արդեն Որոգինեսն իր «Երգ-Երգոցի» այլաբանական մեկնաբանության մեջ հարս ու փեսայի սիրո միությունը դիտարկում է ոչ միայն Հարս-Եկեղեցու եւ Փեսա-Քրիստոսի հարաբերություն, այլեւ որպես մարդկային հոգու եւ Քրիստոսի խորհրդական միավորություն: Արեւելաքրիստոնեական Խորհրդապաշտության «բարոյագործնական» հոսանքի առաջացման գործում այս ճանաչողությունն առանցքային դեր է կատարել: «Աստվածացումն այստեղ դիտարկվում է որպես Խորհրդապաշտական սիրով – (էրոս) (ερος της αγαπης)՝ մարդկային հոգու եւ Քրիստոսի միավորման արդյունք»[11]: Ինչպես հարսը փեսայի հորը կարողանում է հայր կոչել միայն այն ժամանակ, երբ փեսայի հետ հոգով եւ նույնիսկ մարմնով միավորվել, մեկ են դարձել, այն էլ փեսայի հոգով, փեսայի անունից, այդպես էլ մարդը Հայր Աստծուն կարող է հայր անվանել միայն Որդու՝ Քրիստոսի անունից, Քրիստոսի Հոգով, եթե Քրիստոսի հետ հոգով եւ նույնիսկ մարմնով (Ս. Հաղոր-

9 Տե՛ս «Ապաշխարութիւն», Աղօթագիրք, Եր., 2000, էջ 312:

10 Տե՛ս **Π. Минин,** նշվ. աշխ., էջ 361:

11 Անդ:

դությամբ) միավորված են: Սա շնորհական որդեգրության հոգին է՝ ըստ Պողոս առաքյալի. «Աստուած մեր սրտերի մէջ ուղարկեց Իր Որդու Հոգին, որ աղաղակում է՝ աբբա, Հա՛յր» (Գաղ. Դ 6):

Ա. «Երանի՛ հոգով աղքատներին, քանզի նրանցն է երկնքի արքայութիւնը»:

Արդեն, «անառակ որդու վերադարձի» օրինակով ցույց է տրվել, որ Աստծո հետ միավորվելու եւ ազատագրվելու համար պիտի մերժել «այս աշխարհը», որն ըստ Իսահակ Ասորու ուսմունքի՝ մարդկային կրքերի ամբողջություն է[12], խաչված լինել աշխարհի համար (հմմտ. Գաղատ. Զ 14) եւ բարձրանալ Աստծո «Սուրբ Լեռը» (հմմտ. Եսայի ԿԵ 25): Այլ խոսքով՝ մեղքերից թոթափվել, աղքատանալ եւ արդարության ճանապարհով «Առաքինության լեռան» գանձերով հարստանալ: Եկեղեցու հայրերն ու ասկվածաբաններն այս իմաստով էլ մեկնաբանել են «հոգու աղքատությունը»[13]: Հոգեւորապես Աստծո «սուրբ լեռը» բարձրանալու եւ Քրիստոսին մերձենալու համար պետք է կամքն ստորադասել, մերժել եւ խոնարհեցնել Աստծո Կամքին, քանզի մարդկային բնությունը, որով պայմանավորված է կամքը, Աստծունը չի փնտրում, այլ մշտապես հակված է այս աշխարհի հոգե-մարմնական կրքերին կամ մեղքի ծառայությանը: Այսինքն՝ «աղքատութիւն հոգով զկամաւոր խոնարհութիւն ասէ»[14], որ հատկորոշում է նաեւ Աստծո Որդու անցած ճանապարհը… Իրոք, ամենահարուստ թագավորն իր ծառային փրկելու համար կամավորապես խոնարհվեց արքայական բարձունքներից դեպի նրա աղքատությունը. «մեզ համար աղքատացաւ Նա, որ հարուստ էր…» (Բ Կորնթ. Ը. 9): Այսպիսով Եկեղեցու հայրերը բացահայտել են «կամավոր խոնարհության» խորհրդի նշանակությունը որպես Քրիստոսի հոգեբարոյական կերպարին հարազատ մի առաքինություն: Արդեն «ոտնլվայի» արարողությամբ Քրիստոս Իր աշակերտներին ուղղորդում է դեպի խոնարհության առաքինություն, որ «ողջ առաքինության հիմքն է»[15]:

Եթե հպարտությունը մարդու հոգու մեղքի իշխանության ներկայությունն է, ապա խոնարհությունը՝ Քրիստոսի կամ կատարյալ (Աստծո պատկերով եւ նմանությամբ ստեղծված) մարդու: Որդեգրության հոգու մեջ հաստատված մարդու պարագայում այն սիրուց բխած կամավոր խոնարհություն է: Ծառայական հոգում ծագած խոնարհությունը վախից ծնված հարկադրական խոնարհություն է, իսկ վարձկանական խոնարհությունը շահախնդիր խոնարհություն է՝ հիմնված վարձի ակնկալիքի եւ սպասումների վրա: Իհարկե, հոգու շնորհն ու հոգեւոր աճը մարդուն, ի վերջո, պիտի հաստատեն կամավոր (որդիական) խոնարհության մեջ: Աստծո առջեւ «կամավոր խոնարհությունը» բխում է որդեգրության հոգուց եւ այն չի կարող սովորական մարդկային առաքինություն լինել: Այսինքն, այն ծնվել է մարդկային հոգու եւ Քրիստոսի խորհրդական սիրո միությունից: Եվ այն «առաքինության լեռան» վերելքի առաջին աստիճանն է, թեեւ այս հոգին առկա է նաեւ մյուս բոլոր աստիճաններում: Այսպես, մարդկային առաքինություն խոնարհությունը շաղախվելով հավատի եւ սիրո աստվածային (շնորհական) առաքինություններով, մարդուն միավորում է Քրիստոսի հետ ու աստվածացնում: Հետեւաբար, խոնարհությունն այլեւս դադարում է խորհրդա

12 **Вл. Лосский,** Боговидение, Москва, 2003. стр. 267.

13 **Գրիգոր Տաթեւացի**, նույն տեղում, թ. 68ա: **Ներսես Շնորհալի**, Մեկնություն Մատթեոսի ավետարանի, թրգմ. գրաբարից՝ Ս. Սկամբոլցյանի, Ս. Էջմ., 2008, էջ 219-220:

14 **Գրիգոր Տաթեւացի,** նշվ. աշխատ., թ. 68ա: **Ներսես Շնորհալի,** նշվ. աշխատ., էջ 219-220:

15 Հմմտ. **Անանիա Նարեկացի**, Խրատ խոնարհութեան մասին, Աղօթագիրք, Եր., 2000, էջ 350:

զերծ հոգեբարոյական որոշակի կեցվածքի պարզ արտահայտություն հանդիսանալ ու ձեռք է բերում խորհրդապաշտական թաքնախորհուրդ նկարագիր (այս առումով, անհամատեղելի են խորհրդապաշտ ճգնակյացի եւ անհավատ աշխարհիկ մարդու խոնարհության հոգեպատկերները): Ըստ Եկեղեցու հայրերի՝ խոնարհությունը ծնվում է իմաստությունից, իսկ հպարտությունը՝ տգիտությունից[16]: Մարդիկ անխոհեմաբար թողնում են իրենց քրիստոսապատկեր խոնարհությունը եւ հաստատվում անհարազատ, օտար եւ սատանայապատկեր հպարտության մեջ[17]: Արդեն Ս. Հաղորդության ժամանակ Աստծո Որդու Մարմնին եւ Արյանը հաղորդվելու համար «պահանջվում է» արթուն միտք ու գիտակցություն, խոնարհ սիրտ ու պատասխանատվություն:

Հոգով աղքատները պիտի նվաճեն Երկնքի Արքայությունը կամ «Աստծո Լեռը»: Այս ուղին «արեւելաքրիստոնեական խորհրդապաշտության բարոյագործնական ուղղության մեջ արտահայտվում է, ինչպես «π ρ α ξ ι σ -ի»՝ (*պրաքսիս*)՝ ճգնակեցության գործընթացով (ներառյալ բարոյական պահը՝ բարեգործությամբ)»[18], այնպես էլ θ ε ω ρ ι α - ի (*թեորիա*) հայեցությամբ:

Խոնարհության գործերով կամ բարեգործությամբ է, ըստ էության, մարդ հաստատվում «առաքինության լեռան» վրա, եւ խոնարհության պտղաբերության կենսունակությունն առաքինի գործերով է հարատեւում:

Թեորիան կամ հայեցությունը խոնարհ հոգուց բխած մարդ-Աստված աղոթական միությունն է, որ արձագանք է գտնում մտքի ոլորտում՝ «հարատեւ աղոթքի» կամ աստված-հայեցության հորդորով:

Բ. **«Երանի՛ սգավորներին, քանզի նրանք կը մխիթարուեն»**

Սգավորներն «Ապաշխարության լեռան» ուխտավորներն են: Հեռանալով «այս աշխարհից» կամ մեղքի ծառայությունից՝ նրանք չեն կարող միանգամից «Աստծո սուրբ լեռը» բարձրանալ, եթե չապաշխարեն, չսգան իրենց մեղքերի համար, ինչպես հրեաները՝ անմիջապես Ավետյաց Երկիր չմտան, այլ քառասուն տարվա «անապատական» ուղի անցան: «Ապաշխարության լեռան» ճանապարհին Փրկչական Արյան խորհրդական դերակատարության մասին արդեն նշվել է: Սակայն խորհրդապաշտության համար կարեւորն այն ճշմարտության բացահայտումն է, որ շնորհական որդեգրության հոգին է մեղավորին ապաշխարության խորություններ առաջնորդողը: Այսինքն, ապաշխարության սիրտ եւ գիտակցություն մարդկային հոգին ձեռք է բերում Քրիստոսի հետ խորհրդական միավորության արդյունքում: Այլ խոսքով, Ս. Հոգու շնորհի ներգործության իրողությունն այստեղ անժխտելի է:

Կրքերն ու հեշտությունները, բթացնելով հոգին, չեն թողնում, որ նա ցավ զգա, տրտմի ու սգա[19]: Ուստի ապաշխարության սուգը եւս կարելի է դիտարկել հոգով աղքատանալու կամ մեղքից ձերբազատվելու ընթացքի շարունակություն:

Բարոյական չէ այն սուգն ու տրտմությունը, որ կարող է առաջանալ մեղսալի կրքերից հրաժարման արդյունքում: Սակայն «Ներքին Ուսուցչի» կողմից տրված այդօրինակ

16 Հմմտ. «Աղօթագիրք», Եր., 2000, էջ 288:
17 Հմմտ. **Գրիգոր Տաթեւացի,** նշվ. աշխ., թ. 68բ:
18 Հմմտ. **П. Минин,** նշվ. աշխ., стр. 362:
19 Հմմտ. **Գրիգոր Տաթեւացի,** Ցաղագս Թ-Երանութեան, թ. 70ա:

գիտակցությունը համբերությամբ զորացնում է հոգին եւ հնարավորություն տալիս հաղթահարելու թուլության հոգեվիճակները: Աստծո կամքի գերակայությունը մարդկային բնության մեջ հաստատելու ճանապարհին անխուսափելի են տարաբնույթ դժվարությունները, քանզի պիտի հասնել ոչ միայն տիրական հոգի-հնազանդ մարմին փոխհարաբերության, այլեւ մարդկային հոգի եւ Սուրբ Հոգի ենթակայության կամ հնազանդության:

Ճշմարիտ հոգեւոր սուգը ոչ միայն գործած մեղքերի համար է, այլեւ չարած արդարության, հավատի, առաքինի գործերի: Այլ խոսքով, ճշմարիտ սուգը բխում է «ոգու սովից», երբ մարդը, բաժանված Աստծուց, Կենաց Ծառից, դարձել է իր իսկ մեղսահակ կամքի զոհը:

Ներանձնական ինչպիսի՞ հոգեկեցվածք է ներառում ապաշխարության հոգին: Առաջինն «Անառակ որդու վերադարձի» հոգեվիճակն է՝ Աստծո առջեւ մեղավոր լինելու գիտակցությունը եւ մեղքից հրաժարվելու պատրաստակամությունը: Երկրորդը խոնարհության հոգին է եւ արտասվալից աղերսը՝ շաղախված սեփական անձի ոչնչության գիտակցությամբ, բայց Աստծո մեծահոգության հանդեպ՝ աներկբա վստահությամբ: Երրորդը հավատի եւ սիրո միաձույլ առաքինությամբ Ս. Հոգուց մկրտությամբ տրված հոգին է, որ առաջնորդում է «ապաշխարության խորհրդական լեռան» ուխտագնացությունը:

Այս իրավիճակում, առ Աստված սիրո առկայությունը բացահայտվում է նաեւ ճգնավորական փորձառությամբ: Ըստ Անանիա Նարեկացու. «Արտասուքի շնորհը նշան է Քրիստոսին սիրելու եւ Նրա արքայութեանը ցանկալու»[20]:

Փրկության հասնելու համար ամբողջ մի կյանք կարող է չբավականացնել «Ապաշխարության լեռան» անհասանելի բարձունքները նվաճելու, սակայն, ըստ Բարսեղ Կեսարացու. «Արտասուքն ու ապաշխարութիւնը մկրտութեանը հաւասար պայծառացնում են անմաքուր հոգիները»[21]: Ուրեմն, պատահական չէ, որ հոգեւոր սուգը հայրերն անվանել են «ուրախարար սուգ»[22]: Բայց այն հեշտությամբ եւ առավել եւս, ծուլությամբ հասանելի չէ: Թեեւ զղջման եւ արտասուքի շնորհն Աստված է պարգեւում, սակայն, Աստված նայում է մարդկային կամքին: Արդյո՞ք խորհրդազգածը տիրապետում է իր հոգու երկնքում ամպեր կուտակելու եւ անձրեւելու (արտասվելու) արվեստին: «Ապաշխարության լեռան» բարձունքներում Աստվածային Մեգի հպումից է բռնկվում եւ կայծակում հոգու երկինքը՝ բարեբեր արտասուքներով զվարթացնելով ու մխիթարելով անապատացած մարդկային սիրտը: Ս. Հոգու շնորհի ներբնակեցման այս գործընթացը կոչվել է «ընտրողութեան արուեստ[23]»: Վերջինս աստվածաբանական, հոգեբանական, ճգնավորական, խորհրդապաշտական, բարոյագիտական, մարդաբանական եւ ներանձնական ինքնաճանաչողական բնույթի նուրբ աշխատանք է, որը մարզելով, մաքրելով, պատրաստելով մարդու հոգին, միտքը, սիրտը եւ մարմինը, կերտում է համապատասխան հոգեվիճակ, ի խորոց սրտի արտասվախառն աղոթքով Աստծո հետ միավորվելու համար. «Արքայութիւնը ներսում ձեր մէջ է (Ղուկ. ԺԵ 21), այսինքն՝ արտասուքը, որը ներսից բխելով՝ մաքրում է հոգին մեղքերից եւ Աստծուն խոնարհեցնում գթալու»[24]:

---

20 **Անանիա Նարեկացի,** Հոգեշահ խրատ զղջման եւ արտասուքի մասին, թարգմ. գրաբարից՝ Ա. սրկ. Նալչաջեանի, «Գանձասար», **Է,** Եր., 2002, էջ 277:

21 Անդ, էջ 293:

22 «Աղօթագիրք», Եր., 2000, էջ 296

23 **Անանիա Նարեկացի,** Հոգեշահ խրատ զղջման եւ արտասուքի մասին, «Գանձասար», **Է,** էջ 284:

24 Անդ, էջ 287:

Ս. Հոգուց տրված զղջման եւ արտասուքի շնորհը պարուրված է Աստծո սիրով, մարդեղացած Աստվածորդու անճառելի սիրանքով բացված ազատագրության եւ փրկության հանդեպ անսասան հավատով:

Պրաքսիսի գործընթացը կամ ճգնակեցությունը եւ բարեգործությունն ապաշխարության համապարփակ ընթացքն է, արտաքին եւ ներքին մարդու ողջ ջանքերի ու ճգնությունների լիակատար արտահայտությունը՝ առաքինության գործերի տարաբնույթ դրսեւորումներով ու բարեգործությամբ:

Թեորիան կամ հայեցությունն ընտրողական արվեստով ծնված արտասվահառն, հեծեծագին աղոթքն է առ Աստված, որով սգավոր հոգին «Ապաշխարության լեռան» երանական բարձունքներում մխիթարություն է գտնում:

Գ. «Երանի՛ հեզերին, քանզի նրանք երկիրը պիտի ժառանգեն»

Հեզությունը «առաքինության լեռան» սանդուղքի երրորդ աստիճանն է խոնարհությունից (հոգու աղքատության պտուղ) եւ սգավորությունից հետո կամ իմաստությունից եւ խոնարհությունից հետո (ըստ Եկեղեցու հայրերի. «հեզութիւն ի խոնարհութենէն ծնանի եւ խոնարհութիւն յիմաստութեանց: Նոյնպէս բարկութիւն ի հպարտութեանց եւ հպարտութիւն՝ ի տգիտութեանց»[25]):

«Ըստ հոգու պլատոնյան եռամասն բաժանման՝ հեզությունն արիության հետ կազմում է ցասմնական մասի առաքինությունը»[26]: «Հեզությանը համիմաստ են հանդարտը, լուռն ու անշարժը»[27]: Բարկությունը (հեզության հակոտնյան) բարի է, եթե սանձում է ախտերը եւ սատար կանգնում Աստծո կամքին: Հեզությունը չար է, եթե բիում է ծուլությունից, տգիտությունից, հոգե-մարմնավոր ախտերի տարատեսակ դրսեւորումներից: Հեզությունը ներքին զոհաբերություն է, երբ անձը ճնշում է իր մեջ բարկության պոռթկումը եւ համբերությամբ դիմանում հանդիմանություններին եւ ամբաստանություններին՝ նմանվելով Քրիստոսին: Հոգեւոր կատարելության ճանապարհին հաստատվելով հեզության առաքինության մեջ՝ մարդը բարոյապես միավորվում է Քրիստոսին, քանզի Նա Իրեն հեզ եւ սրտով խոնարհ անվանեց (հմմտ. Մատթ. ԺԱ 29): Ջուտ իր քրիստոնեական նշանակությամբ, հեզությունը, ինչպես խոնարհությունը, Աստծո հանդեպ ճշմարիտ սիրո մի արտահայտություն է եւ խորքային գիտակցումն այն ճշմարտության, որ մարդ ինքն իրենից ոչինչ չի ներկայացնում, իսկ, եթե ինչ որ բանի է հասնում (Քրիստոնեական իմաստով), ապա միայն՝ Նրա ողորմությամբ[28]: Հեզությունը, որպես խոնարհության ծնունդ, անկասկած, «սրտի առաքինություն է», բարոյական զգացում, հոգեւոր գիտակցություն: Սակայն սրտի այդ «ճառագայթը» անդրադարձվում է նաեւ մտքում, ինչպես արեգակի ճառագայթներով է լուսավորվում ու ջերմանում լուսինը (ըստ Գրիգոր Տաթեւացու՝ սիրտը խորհրդանշում է արեգակն իր ջերմությամբ, իսկ միտքը՝ լուսինն իր սառնությամբ[29]): Հեզությունը, որպես սրտի ջերմության կրող, արտահայտվում է հեզաբարո, հեզահամբույր բառերով, իսկ որպես մտքի սառնության կրող՝ հեզամտություն, լռություն բառահանդերձներով (այս բառերը ծնունդ են համապատասխան

25 **Գրիգոր Տաթեւացի,** Յաղագս Թ-Երանութեան, թ. 71բ:
26 Անդ, թ. 72ա:
27 Անդ, թ. 71ա:
28 Տե՛ս **С. Зарин,** Аскетизм, С. Петербург ,1907, стр. 471:
29 Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի,** Գիրք Հարցմանց, էջ 241:

հոգեվիճակների առկայության): Այս ամենը բավարար հիմք են ստեղծում **Գ.** երանության վերլուծության համար ընտրելու «բարոյահիմացաբանական ուղղությունը»[30], քանի որ առկա է նաև այդպիսի խորհրդական, ճգնավորական փորձառություն: Սրտի եւ մտքի սահմանագիծը շատ նուրբ է եւ տեսողության կարիք ունի: Սրտի ոլորտի որոշակի հոգեվիճակ պայմանավորում է մտքի համապատասխան պատկեր եւ հակառակը: Իսահակ Ասորու ուսմունքի համաձայն՝ հեզաբարոյությունը մշտական ինքնասահմանափակման պատճառով վեր է ածվում մտահայեցության[31] կամ հեզամտության: Այսինքն՝ սրտի ջերմությամբ տոգորված առաքինությունը դառնում է «սառը մտահայեցություն»:

Ըստ Գրիգոր Տաթեւացու՝ առաքինությունը տիրապատկեր մարդու զգեստն է[32]: Իսկ Իսահակ Ասորու ուսմունքի համաձայն՝ հեզամտությունը Աստվածության հանդերձն է, որով (στοη θετηος ετι) զգեստավորվել էր մարդացած Բանը…[33]:

Բարոյահիմացաբանական հոսանքի խորհրդապաշտ հայրերից Իսահակ Ասորին տարբերակում է Աստծո հետ միավորման երեք հանգրվան՝ ապաշխարություն, մաքրագործում, կատարելություն[34]: Այստեղ առկա են հոգեւոր դարձի եւ վերընթացի բոլոր նախադրյալները՝ «այս աշխարհը» մերժելու եւ մկրտության ավազանով Եկեղեցու փրկարար ափ հասնելու, ապաշխարության բարձունքներ հաղթահարելու եւ առաքինության լեռան վրա հաստատվելու ընթացքը:

Այստեղ πραξις-ը (*պրաքսիսը*) մի կողմից մարմնական կրքերը հաղթահարելուն միտված ճգնակեցությունն է, մյուս կողմից՝ հավատի, խոնարհության, սիրո հոգուց բխած բարեգործությունները:

θεορια-ն կամ հայեցությունը հեզաբարոյության հոգով աղոթական միությունն է Աստծո հետ:

Դ. «Երանի՛ նրանց, որ արդարութեան քաղցն ու ծարաւն ունեն, որովհետեւ նրանք պիտի յագենան»

Ըստ մարդկային մտահայեցության՝ արդարն անմեղն է: Սակայն անմեղ մեկը չկա, քանի որ նորածին մանուկն իսկ կրողն է ադամական սկզբնական մեղքի: Ավելին, թուլացած մարդկային բնությունը դարձել է մեղսահակ եւ Աստծո կամքին չի ուզում ենթարկվել: Այլ խոսքով (ըստ հոգու պլատոնյան բաժանման)՝ բանականի մաս հանդիսացող կառավարիչ, դատավոր արդարությունը որքան էլ ջանա բանականը՝ խռիական, ցասմնականը՝ արիական եւ ցանկականը՝ ողջախոհական դիրքերում պահել, մեծավ մասամբ պիտի ձախողի, անհաջողության մատնվի[35]: Հետեւաբար, «հին մարդու» ճանապարհն անստույգ է եւ դեպի փակուղի առաջնորդող: Ուստի, հարկ է թոթափել այն ու «նորը հագնել»: Եվ որդեգրության հոգին է այդ նորը. «Իսկ, եթէ Քրիստոս ձեր մէջ է, ապա մարմինը մեռած է մեղքի համար եւ հոգին կենդանի է արդարութեան համար» (Հռ. Ը 10): Այսպիսով, արդարությունը համապարփակ առաքինություն է դառնում ոչ միայն ըստ պլատոնյան մարդաբանության կամ

30 Տե՛ս **Պ. Минин,** նշվ. աշխ., էջ 380.
31 Տե՛ս **С. Зарин,** նշվ. աշխ., էջ 473:
32 Տե՛ս «Գիրք Հարցմանց», էջ 271
33 Տե՛ս **С. Зарин,** նշվ. աշխ., էջ 474:
34 Հմմտ. **Вл. Лосский,** նշվ. աշխ., էջ 271.
35 Տե՛ս **Գրիգոր վարդապետ,** Խօսք ճշմարիտ հաւատքի եւ առաքինասէր վարքի մասին, Եր., 1992, թարգմ. Սրամբոլցեանի, ներած. Ց. Քէոսէեանի, էջ 24:

մեղքի գիտակցության առկայությունից, չարի եւ բարու գնահատման կարողությունից, այլեւ իր խորհրդական զգեստավորությամբ: Այդ հոգին ներամփոփում է ոչ միայն խոհեմության, արիության, ողջախոհության խորհրդազերծ վիճակները, այլեւ հույսով, հավատով, սիրով շաղախված խոնարհության, սգավորության, հեզության խորհրդական որակներն ու նվիրական հանդերձները: Ուրեմն, պատահական չէ, որ Գրիգոր Տաթեւացին «արդարությունը» մի կողմից վերագրում է հավատով եւ հույսով ընկալվող Աստվածային Իմաստությանը կամ ս. Ավետարանի գիտությանը, մյուս կողմից՝ աստվածային սիրուն[36]:

Արդարությունը Աստվածորդու բնորոշիչ անուններից մեկն է. «որ եղեւ մեզ արդարութիւն եւ սրբութիւն» (Ա Կորնթ. Ա 30): «Երբեմն Քրիստոս է արդարություն կոչվում, երբեմն՝ Ս. Հոգին»[37]: Այս առումով, Քրիստոսի «կերտած» «արդարության լեռան» գագաթը գրեթե անհասանելի է, քանի որ այդ Լեռն Ինքն Աստծո Որդին է: Սակայն Աստվածորդու մարդեղությամբ, Ս. Հոգու շնորհով մարդուն անհասանելի արդարությունը հասանելի է դառնում: Առաքյալների, Եկեղեցու հայրերի, ճգնավորների կենցաղավարությունն ապացուցել է, որ «սիրո, արդարության» այս աստիճանը յուրացվել է մարդկային բնության կողմից: Սակայն արդարացման խորհրդի հիմքում Աստվածորդու փրկութենաբեր ինքնազոհաբերությունն է, խաչի վրա կրած չարչարանքները, մարդկության համար թափած արյունը: Այսպես, արդարացումը նույնանում է աստվածացման հետ, որ Աստծո հետ միավորման պտուղն է: Իսկ Աստծո հետ միավորումն սկսվում է Աստվածային եւ մարդկային կամքերի միաձուլացմամբ («Եղիցին կամք Քո») կամ պատվիրանապահությամբ: Արդյունքում արդարությունը հաստատվում է մարդկային կամքի մեջ. «Եւ որ քաղցի ամենայն պատուիրանացն Աստծոյ, երանելի է»[38]: Աստծո հետ հաղորդակցման հիմքում հոգեւոր քաղցի եւ ծարավի վիճակն է: Ըստ Տաթեւացու՝ արդարության քաղցն ու ծարավը խորհրդանշում են մարդու հոգեւոր կենտրոնների՝ սրտի եւ մտքի պահանջմունքները, ընդ որում, տեսական իմաստությունը «Զմիտս զօրացուցեալ, իսկ գործնականը՝ զհոգին»[39]:

Ս. Հաղորդությամբ գոհանում են արդարության քաղց ու ծարավ ունեցողները, քանզի սրբագործվում, արդարացվում, աստվածանում է մարդկային բնությունը, որովհետեւ «Արդարութիւն է Մարմին եւ Արիւն Քրիստոսի, զի Մարմինն սուրբ արդարութիւն է մարմնոյս եւ Արիւնն՝ սրբությունն հոգւոյս»[40]: Եվ մարդը միավորվում է Քրիստոսի հետ. «Ով ուտում է Իմ Մարմինը, եւ ըմպում Իմ Արիւնը, կը բնակուի Իմ մէջ, եւ Ես՝ նրա մէջ...» (Յովհ. Զ 57):

Խորհրդապաշտության բարոյա-իմացաբանական ուղղության տեսանկյունից *պրաքսիսի* գործընթացը (ճգնակեցություն եւ բարեգործություն) այստեղ սկսվում է աստվածճանաչողությունից, որդեգրության հոգին մկրտությամբ ընդունելուց հետո, երբ հավատով լուսավորված մարդկային հոգին խորհրդական սիրով միավորվում է Քրիստոսի կամ Արդարության Հոգու հետ: Հոգեկան եւ մարմնական ախտերի դեմ պայքարում է իրագործվում «արդարության ներբնակեցումը» մարդկային հոգե-մարմնական բնության մեջ: Արդյունքում միտքը խորհում է աստվածայինը, կամքը՝ հնազանդվում աստվածային կամքին:

36 Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի,** Յաղագս Թ-Երանութեան, թ. 74բ:
37 Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի,** Գիրք Հարցմանց, էջ 452-453:
38 **Գրիգոր Տաթեւացի,** Յաղագս Թ-Երանութեան, թ. 74ա:
39 Անդ:
40 Անդ, թ. 74բ:

Այսինքն՝ համապարփակ ճգնավորական ընթացքը՝ պահքը, աղոթքը, ապաշխարությունը խոնարհության, հեզության, հավատի, սիրո հոգուց բխած առաքինության գործերն ու բարեգործությունն ի վերջո մարդուն հաստատում են արդարության մեջ: Վերականգնվում է հոգի-Ս. Հոգի, տիրական հոգի-ենթակա մարմին ճշմարիտ, արդար հարաբերությունը:

Եվ արդարության հոգի ստացած սիրտն անպտուղ կճանաչվի, եթե արդարության գործեր չունենա:

Թեորիան կամ հայեցությունը մի կողմից «խորհրդական արդարության» հոգուց բխած աղոթքով Աստծո հետ միավորումն է, մյուս կողմից՝ աստվածճանաչողությամբ, աստվածտեսությամբ, աստվածապաշտ կենցաղավարությամբ, աստվածային իմաստության խոկումը:

Ե. «Երանի՛ ողորմածներին, քանզի նրանք ողորմութիւն պիտի գտնեն»

Ողորմածությունն «առաքինության լեռան» Ե աստիճանն է, արարչության մեջ Աստծո ամենաշոշափելի, ամենատեսանելի ներկայությունը: Քանզի, լինելով ինքնաբուն բարի, Աստված չկամեցավ մենակեցաբար հարատեւել, եւ ստեղծեց իմանալի երկինքը, զգալի աշխարհը, հոգեւոր ու մարմնավոր էակներին: Արարչագործության վերջին փուլում ստեղծեց նաեւ մարդուն, որ պսակն էր ողջ ստեղծագործության եւ ամփոփում էր Իր մեջ ամբողջ արարչությունը՝ հոգեւոր եւ նյութական դրսեւորումներով: Աստված հրեշտակներին եւ մարդկանց «չպարտադրեց» Իր իշխանությունը, այլ ազատ ընտրությամբ «ինքնորոշվելու» հնարավորություն տվեց: Արդյունքում, ապստամբ հրեշտակները հեռացան նրանից՝ գայթակղեցնելով նաեւ դրախտարնակ մարդուն: Մարդկությունը կորցրեց դրախտը եւ առավել շատ տենչաց Աստծո ողորմությանը:

Սակայն «Իր պատկերի (մարդու) նկատմամբ ունեցած սիրուց Հայրը չխնայեց եւ ողորմություն տվեց Իր Որդուն, Որդին չափառսաց Իր Անձը, Ս. Հոգին չի խնայում Իրեն եւ հարատեւ բախում է մարդկանց սրտերը»[41]:

Հեռանալով Աստծուց՝ մարդկային բնությունը դարձել էր հեղեղուկ եւ Աստծո պատկեր-նմանությանը խառնվել էր սատանայականը հաճախ դժվարությամբ զատորոշվող: Արիությանը շաղախվել էր ատելությունը, սիրուն՝ եսասիրությունը, իսկ կամքը խոտորվել, բաժանվել էր Աստվածային կամքից: Այսպես, մարդու հոգում բնակություն է հաստատել հպարտությունը, ատելությունը, եսակենտրոնությունն ու անողորմությունը: Իսկ ողորմածներին երանի տալով՝ Քրիստոս Ս. Հոգու տաճար տանող եւս մի ճանապարհ է բացահայտում մարդու համար: Ըստ Եկեղեցու հայրերի. «չիք այլ առաքինութիւն, որ զմարդն Աստծոյ նման առնէ, քան զողորմութիւնն»[42]: Եվ մարգարեներն Աստծուն ողորմած էին անվանում (Դավիթ, Մովսես, Հովնան)[43]: Հիրավի, Աստված-մարդ հարաբերության արդյունքում առաջացած Ողորմած անունը կրոնաբարոյական տեսակետից ամենաընդունելին է: Եվ ողորմածն իր չափով նմանվում է Աստծուն, իսկ անողորմը՝ գործով եւ անունով՝ Սատանային[44]: Ողորմության գործում չափազանց կարեւոր է ներքին հոգեկեցվածքը: Ծառայական հոգեվիճակը հիմնված է փառասիրության վրա (հմմտ. Մատթ. Զ 2):

41 Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, Ոսկեփորիկ, թարգմ. գրբ. եւ ծանոթ. Հ. Քյոսեյանի, Եր., 1995, էջ 6:

42 **Գրիգոր Տաթեւացի**, Ցաղագս Թ-Երանութեան, թ. 75ա:

43 Անդ:

44 Անդ:

Վարձկանության հոգին բիռում է օգտապաշտական դիտավորությունից: Իսկ վարձատրության ակնկալիք կարող է լինել թե՛ այս կյանքում եւ թե՛ վերջին դատաստանի ժամանակ: Որդիական հոգեկեցվածքը, անկասկած, սիրո արտահայտություն է առ Աստված եւ առ ընկեր, ու ճշմարտապես միտված է Աստծուն փառավորելու նշանակետին: Ըստ Գրիգոր Տաթեւացու՝ «ողորմութիւն ի սիրոյ ծնանի՝»[45]: Նախ սիրելիների նկատմամբ տածած մարմնավոր սիրուց, ապա առ ընկեր, առ Աստված առ Աստծո պատվիրաններ ուղղված սիրո հոգուց[46]: Եւ քանի որ ողորմությունը սիրուց է բիռում եւ սիրո պտուղ տալիս, Քրիստոս երանության է արժանացնում նրան, ով պտղաբերում է առաքինություններից ամենամեծը՝ սերը[47]:

Քրիստոնեական խորհրդապաշտության համար կարեւոր է այն գիտակցումը, թե ողորմած սիրտը մարդկային ձեռքերում չէ, այլ Ողորմած Աստծուց տրված շնորհ: Այս առումով, ողորմածության հոգին խորհրդազերծ բարոյական առաքինություն ճառագող իրողություն չէ, այլ ընդգրկում է հավատը եւ հույսը, խորհրդական սերը: Այսպես, ողորմածության առաքինությունը դառնում է խորհրդական մի ճառագայթ, որով մարդկային հոգին միավորվում է Աստծո Որդու հետ:

Լինելով հոգու, մարմնի եւ մտքի միություն՝ մարդկային էությունն ունի հոգեւոր, մտավոր եւ նյութական պահանջմունքներ: Ուրեմն, ողորմությունն էլ միտված է մարդու հոգեմտավոր եւ մարմնական «կարիքների» բավարարմանը:

Ողորմությունը բարեգործություն է, որով հոգին, առաջին հերթին, ինքն իրեն է ողորմում՝ լցվելով բարությամբ ու սրբվելով մեղքերից. «Նախ հարկավոր է, որ յուրաքանչյուրն իր հոգուն ողորմի եւ լրացնի բարու իր պակասը»[48]:

Հոգեւոր ողորմությունն առավել նրբազգացություն է ենթադրում եւ նրբիմացություն պահանջում: Այն խարսխված է հոգեւոր աճի, ճանաչողության, իմաստության, խոբազիտության վրա եւ պայմանավորված է Ս. Հոգու շնորհի ընկալման ու յուրացման ընդունակությամբ: Ուստի, հոգեւոր ողորմությունը դժվարամատչելի է եւ կատարելության ավելի բարձր աստիճան է պահանջում, «զի նախ պարտ է զինքն սրբել ի մեղաց եւ ապա զայլս»[49]:Մարդուն Աստծուց բաժանում է մեղքը՝ գործված խոսքով, մտքով, սրտով (խորհրդով) եւ գործով: Ջղջումով, խոստովանությամբ, ողորմության գործերով քանդվում է մեղքի պարիսպը եւ մարդկային հոգին հաղորդակցվում է Աստծո հետ:

Հավատքի լույսն ու աստվածճանաչողությունը եւս աստվածային ողորմություն են, Ս. Հոգու շնորհի՝ տրված այս աշխարհի «ունայնությունից» փառապող աստվածախնդիրներին: Իսկ մարդկային հոգե-մարմնավոր բնությունը ճշմարտապես ողորմություն է ստանում միայն իր «աստվածացման, արդարացման քաղցը» Ս. Հաղորդությամբ զոհացնելով:

Թեեւ ողորմածության առաքինությունը խորհրդապաշտի համար կարող է դառնալ սառը մտահայեցություն, այսուհանդերձ, ողորմության գործերում սրտի ջերմության առկայությունը գերակա է: Ուստի, այս երանությունն ունի գերազանցապես բարոյագործնական բնույթ: *Պրաքսիսն* այստեղ հոգե-մարմնական կրքերի կամ մոլությունների դեմ պայքա-

45 **Գրիգոր Տաթեւացի,** նշված աշխ., թ. 75բ:
46 Անդ:
47 Տե՛ս **Ներսես Շնորհալի,** նշվ. աշխ., էջ 240:
48 **Ներսես Շնորհալի,**նշվ. աշխ., էջ 242:
49 **Գրիգոր Տաթեւացի,** Ցաղագս Թ-Երանութեան, թ. 77ա:

բում անձնազոհ եւ ինքնուրաց հոգեկերպված ձեռք բերելու ձգտումն է՝ սիրո եւ ժուժկալության առաքինություններով զգեստավորված հոգեւոր բնության պտղաբերությունը, որ ինքնաբացահայտվում է ողորմության, սիրո, հավատի գործերով ու բարեգործությամբ (այրի կնոջ լումայի պատմության մեջ երեւում է ճշմարիտ կրոնական ոգու այդպիսի մի արտահայտություն):

Թեոդիան կամ հայեցություն ի խորոց սրտի ներում, ողորմություն, փրկություն հայցող եւ առ Աստված վերացող աղոթքն է, որով մարդկային հոգին միավորվում է Աստծո հետ:

Զ. «Երանի՛ նրանց, որ սրտով սուրբ են, քանզի նրանք Աստծուն պիտի տեսեն»

«Առաքինության լեռան» Զ ապիճանը կամ սրտի սրբությունը խորհրդանշում է Աստծո «Սուրբ լեռան» անհասանելի վերելքը՝ ներառելով ասպվածտեսության խորհրդական, շնորհական, ճգնավորական, մտահայեցողական ողջ ընթացքը, ասպվածճանաչողական կամ ասպվածաբանական եղանակները, նախորդ երանիների բոլոր ձեռքբերումները:

Սրբության աղբյուրն Աստված է, քանզի սուրբ է Նրա անունը: Սրբությունն ասպվածնմանության գերագույն վիճակն է, Աստծուն միավորվելու անհրաժեշտ հոգեվիճակը:

Սրտի սրբությունը մի կողմից Ս. Հոգով Քրիստոսի հետ նվիրական միության արդյունք է, մյուս կողմից՝ հոգեկան եւ մարմնական կրքերի կամ մեղքերի դեմ պայքարի պտղաբերություն: Այլ խոսքով, ճգնավորական ընթացքն է պայմանավորում «որդեգրության հոգու» մեջ ապրելու եւ հաստատվելու կարողությունն ու կամքը: Դեռ հին իմաստասերներն էին այս ուղին մատնանշում. «Եթե փիլիսոփան (իմաստասերը) չմահացնի կրքերը եւ չմաքրի հոգին, նա չի կարողանա խորհել Աստծո մասին, որովհետեւ ինչպես Պլատոնն է ասում, անմաքուրին չի թույլատրվում հպվել մաքուրին...»[50]:

Քրիստոնեական մոտեցումն ավելի համապարփակ է՝ պիտի մեռնի հին մարդը, որպեսզի Քրիստոսով Ս. Հոգուց ծնվի նորը: Եվ Քրիստոսով մկրտվածները Նրա մահով են մկրտվում, մկրտությամբ թաղվում Նրա հետ մահվան մեջ, որպեսզի մեռելությունից հարություն առնեն կյանքի նորոգության մեջ (հմմտ. Հռ. Զ 3-4)[51]: Ու մկրտվողը թեեւ սրբվում է սկզբնական մեղքից, ընդունում Ս. Հոգու շնորհը, որդեգրվում Հայր Աստծուն, սակայն պարտավոր է շարունակ բարձրանալ «ապաշխարության լեռը»՝ ներգործական մեղքերից սրբվելու համար[52]:

Սրտի սրբությունը հասարակության մեջ ընդունված բարոյական մաքրության ասպիճանակարգ չէ, ոչ էլ խոսքի, մտքի եւ խորհուրդների մաքրության կարճատեւ մի փայլատակություն, այլ մարդկային կամքով ամրագրված եւ Ս. Հոգով վերաստեղծված ասպվածամարդկային ճշմարիտ բնության բացահայտման ընդունակություն:

Սրտի սրբությունը հոգեւոր կատարելության գերագույն ասպիճանն է: Իսկ Զ Երանին այս վերընթացում խորհրդանշում է մարդկային բնության խաչելությունը եւ հին մարդու մահը (մահվան ուրբաթը), որին համապատասխանում է երկրորդ ասպվածային առաքինությունը՝ հույսը:

Ասպվածտեսության հիմնահարցը կարեւորագույն խնդիր է Խորհրդապաշտության համար, քանի որ նրանով է կերպավորվում Աստծուն միավորվելու ընթացքը: Արդեն եկեղե-

50 Տե՛ս **Դավիթ Անհաղթ**, Երկեր, թարգմ., առաջաբանը եւ ծանոթ. Ս. Արեւշատյանի, Եր., 1980, էջ 73:

51 Տե՛ս «Մկրտութիւն», Աղօթագիրք, էջ 304:

52 Տե՛ս անդ, «Ապաշխարութիւն», էջ 312:

ցու հայրերի կողմից դասակարգված «Աստվածաբանական եղանակները»[53] («Հարցմանց»-ում մեջ Տաթեւացին իր դասակարգումը հիմնում է Գրիգոր Աստվածաբանի եւ Դիոնիսիոս Արեոպագացու մեկնությունների վրա) աստվածտեսության չորս մակարդակներ են:

Պատճառական եւ խորհրդանշական (կամ նշանական) եղանակները քննելով արարչությունը, Աստծուն տեսնում են ճառելի անվանակոչությամբ՝ տալով պատճառական եւ բարոյական որակումներ, շարժվելով զգալի ոլորտից դեպի իմանալի ոլորտ: Աստված արարիչ է, նախապատճառ, նախասկիզբ, անպատճառ պատճառ եւ այլն (պատճառական որակումներ), Բարի է, Գեղեցիկ, Ողորմած…, Լույս է, Կյանք, Սեր, Իմաստություն եւ այլն (բարոյական որակումներ):

Խորհրդական եղանակն անդրանցական Աստծուն տեսնում է անտեսությամբ՝ Սուրբ իմացությամբ անճառաբար Նրան բոլոր էություններից կամ է-երից դուրս նկատելով[54]:

Աստվածորդու մարդեղությամբ եւ Ս. Հոգու հայտնությամբ (Հոգեգալուստ) հավատքը վերաճեց Ս. Երրորդության Անձերի ճանաչողության, իսկ աստվածտեսությունը ճոխացավ դասական աստվածաբանության գիտելիքներով՝ Երրորդաբանությամբ եւ Քրիստոսաբանությամբ:

Ջ Երանին որպես աստվածտեսության «նախապայման» է առաջադրում հոգեբարոյական մաքրությունը, անմեղությունն ու անարատությունը: Այս առումով, ըստ Տաթեւացու, նրանք են սուրբ սրտով տեսնում Աստծուն «որք առաքինութեամբ մաքրէն զինքեանս»[55]: Գործնականում այս հոգին սրբագործվում է առ Աստված վերացող սուրբ աղոթքով: Սրտի սրբության խորհրդական փաճարի հիմքում ընկած են երեք աստվածային առաքինությունները՝ խորհրդական հույսը, հավատը եւ սերը: Այս հոգին մասնակիորեն գործում էր նաեւ Հին Ուխտի ժամանակաշրջանում, երբ աստվածտեսությունը երեւութական ու պայմանական էր, սակայն մարգարեներին տրված էր նաեւ հավատի շնորհական տեսությունը:

Նոր Կտակարանում առաքյալները մարդացած Աստծուն տեսան մարմնով, իսկ Նրա բնության կամ էության մասին նշեցին. «Աստծուն ոչ ոք երբէք չի տեսել» (Ա Հովհ. Դ 12) «եւ ոչ էլ կարող է տեսնել» (Ա Տիմ. Ջ 16): Ըստ Տաթեւացու. «Տեսանել զբնութիւնն մահ է եւ զանձնաւորութիւնն՝ կեանք, հաւատալն կեանք է եւ քննելն՝ մահ»[56]:

Ապաշխարության խորհրդով մեղքերից ազատվելը բավական չէ սրտի սրբություն ստանալու համար: Հարկ է նաեւ մաքրել մտքերն ու խորհուրդները: Իրականում, խորհուրդների երկարատեւ պատերազմի բովով անցնելուց հետո են ճգնավորները հարատեւել սրտի սրբության մեջ*՝ նվաճելով «Աստվածտեսության լեռան» անճառելի բարձունքներ:

«Պիղծ խորհուրդներով (հպարտության, պոռնկական եւ այլն) մարդկային հոգում կերպավորվում է Սատանան, իմացական խավարն ու մահը, իսկ մաքուր սրտից բխած աղոթքով՝ աստվածային լույսն ու կյանքը»[57]: Այլ խոսքով՝ սրտի սրբությունը Ս. Հոգով Քրիստոսի հետ միավորման կատարելությունն է, քանզի Ս. Հոգուց է նոր սիրտ տրվում եւ քրիստոնյա բնությունը շոշափելի կերպով զորանում:

---

53 Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի,** Գիրք Հարցմանց, էջ 122:

54 Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի,** Յաղագս Թ-Երանութեան, թ. 80ա:

55 **Գրիգոր Տաթեւացի,** Յաղագս Թ-Երանութեան, թ. 80ա:

56 **Գրիգոր Տաթեւացի,** նշվ. աշխ., թ. 79ա:

57 Մմմր. «Գիրք Եթն խորհրդոց մեղաց՝ արարեալ սրբոյն հօրն Եւագրեայ եւ հաւաքեցեալ ի մի յոգնաջան երկամբ Մատթէոսի վարդապետի...», Կ. Պոլիս, 1750: Տե՛ս անդ, թ. 80բ:

Զ Երանին ակներեւորեն աղերսված է խորհրդապաշտության բարոյահմացաբանական ընկալմանը, որովհետեւ սրտի սրբությունը համակում է մարդկային հոգեմտավոր ողջ էությունը: Իսկ հոգեմարմնական բնությունը սրբանում է Ս. Հաղորդությամբ՝ Տիրոջ Մարմնի եւ Արյան ճաշակմամբ:

Առաքինության գործերն ու սրբակրոն վարքը մարդկային հոգու եւ Քրիստոսի միջեւ առկա խորհրդական սիրո միության բարի պտուղներն են: Իսկ *թեոդիան* կամ մտահայեցությունը սուրբ սրտից բխած եւ լուսավոր մտքով կերպավորված առ Աստված ճառագող աղոթական վերհառնումն է:

Է. «Երանի՛ խաղաղարարներին, քանզի նրանք Աստծոյ որդիներ պիտի կոչուեն»

Խաղաղությունն «Առաքինության լեռան» վերին՝ **Է** աստիճանն է: Խաղաղության աղբյուրն Աստված է, քանզի Ս. Երրորդության Անձերը կազմում են կատարյալ խաղաղ ներդաշնակ միություն եւ ունեն մի բնություն կամ էություն, մի կամք, մի ներգործություն, մի իշխանություն: Մարդացած Աստվածորդու՝ Քրիստոսի պարագայում եւս Աստվածային Բանը, Հոգին եւ Մարմինը միեղեն խաղաղության մեջ են. «վասն միաւորութեան բնութեան»[58]: Գրիգոր Տաթեւացին Ս. Երրորդության Բնությանը եւ Անձերին ներհատուկ (բնորոշ) խաղաղությունն անվանակոչել է անստեղծ, անսասան եւ հավիտենական, հրեշտակների ունեցած խաղաղությունը՝ հաստատուն եւ մշտնջենավոր, իսկ մարդկայինը՝ փոփոխական եւ ժամանակավոր[59]: Զրկվելով Աստծո օրհնությունից՝ արարչության մեջ մեղքի եւ մահվան քայքայումները թափանցում են մինչեւ մարդկային հոգեմարմնավոր բնության խորքերը, որն էլ պատճառ է դառնում մեղսահակ կամքի ի հայտ գալուն: Այսպես, մարդու անձը գերի է դառնում իր խաթարված բնության ձեռքին: Դժվարանում եւ սահմանափակվում է մարդ-Աստված հաղորդակցությունը՝ ինչ-որ առումով դառնալով թշնամական: Այս իրավիճակը պահպանվում է մինչեւ Խաղաղության Արքայի՝ Որդի Աստծո մարդեղության ժամանակաշրջանը, որ պիտի հեղեր խաղաղությունը երկրի վրա, ինչպես Նրա ծննդյան ժամանակ երգեցին հովիվներն ու հրեշտակները. «Փա՛ռք Աստծուն բարձունքներում եւ երկրի վրա խաղաղութիւն» (Ղուկ. Բ 14):

Մարդկային բնության մեջ խաղաղության հաստատումն այն է, որ մարդու հոգեմարմնական բնությունը ենթարկվի աստվածային կամքին (բանականը խորհի աստվածայինը եւ ցասմնականի զորությամբ իշխի ցանկականի վրա): Աստվածային անստեղծ խաղաղությունը մարդուն է փոխանցվում որդեգրության հոգու միջոցով՝ մարդկային հոգու եւ Քրիստոսի միջեւ խորհրդապաշտական սիրո միության արդյունքում: Եվ այն խաղաղությունը, որ ամեն օր բաշխվում է Եկեղեցում, չի կարող լինել ծիսական հանդերձանքով պատված սովորական բարոյախոսություն, այլ այն երկնային մի ցող է, որ իջել է երկնասլաց բարձունքներից եւ հանգրվան է փնտրում մարդու մեջ: Այսպիսով, խաղաղությունը մի համապարփակ առաքինություն է կամ խորհրդական զորություն, որ ամփոփում է իր մեջ երեք աստվածային եւ չորս մարդկային առաքինությունները՝ հույսը, հավատը, խորհրդական սերը, խոնարհությունը, հեզությունը, սուգը, արդարությունը եւ այլն:

58 **Գրիգոր Տաթեւացի,** նշվ. աշխատ., թ. 80բ:
59 Անդ, թ. 81բ:

Որպես զոհաբերության պարվող անմեղ գառ, Քրիստոս բացահայտում է այդ խորհրդանիշի բազմիմաստ էությունն առավելապես ներքին խաղաղության եւ խաղաղարարության տեսանկյունից: Ս. Հոգու խորհրդանիշ աղավնին եւս մարդու վրա հանգչող խաղաղության խորհրդական բնույթն է մատնանշում:

Եթե Ջ Երանին խորհրդանշում է խաչելությունը (մեղքի նկատմամբ մահը), ապա Է Երանին խորհրդանշում է հարությունը, հարուցյալ կյանքի պտղաբերությունը, քանզի «խաղաղությունը, որ սերն է, լրումն է բոլոր բարիքների եւ առանց նրա մյուսներն անկատար են»[60] («եթե մարմնիս անգամ մատնեմ այրվելու, բայց սեր չունենամ, ոչինչ եմ» (հմմտ. Ա Կորնթ. ԺԳ 3): Է Երանին խորհրդանշում է նաեւ մարդու աստվածացումը, երբ Քրիստոս իջնելով մարդկային հոգու դժոխքը, ամբողջապես ազատագրում է այն դիվային տիրապետությունից, հոգեւոր մեռելությունից եւ նոր մարդու՝ աստվածամարդու արարումն է իրագործում: «Նոր արարչագործությունը» Բանն Աստված իրագործում է յոթ փուլով՝ վերջին փուլում կամ աստիճանում խաղաղարարությամբ ստեղծելով աստվածամարդուն (ըստ Գրիգոր Տաթեւացու՝ Երանիները թվով ինն են, ըստ էության՝ ութը, ըստ աստիճանների՝ յոթը[61]):

Հասնելով «խաղաղարարության»՝ ճգնավոր-սրբերը ոչ միայն «խորհուրդների պատերազմն» են հաղթահարում, այլեւ սրտի սրբության ավելի բարձր աստիճանի արժանանում ու աստվածտեսության ամենաքաղցր պտուղը ճաշակում: Ինչպես ցույց է տալիս ճգնավորական փորձառությունը, աստվածային խաղաղությունն ունակ է ներթափանցելու մինչեւ մարդկային բնության խորքերը՝ հոգեկան եւ մտավոր կենտրոններ՝ սրտի եւ մտքի ոլորտներ, իսկ Ս. Հաղորդությամբ նաեւ մարդու հոգեմարմնական բնություն: Խաղաղարարության այսօրինակ արժեւորումը թույլ է տալիս այն լուսաբանել իբրեւ բնորոշ արտահայտություն խորհրդապաշտության բարոյահմացաբանական հոսանքի:

Ը. «Երանի՛ նրանց, ովքեր հալածում են արդարութեան համար, քանզի նրանց է երկնքի արքայութիւնը»

Ութ թիվը խորհրդանշում է «յոթ դարերին» հաջորդող ապագա հարությունը. «ութօրյա էր բորոտի սրբվելը եւ բանակի մեջ մտնելը, որ Սուրբ Երկինք մտնելու խորհուրդն ունի»[62]: Այսինքն, ութերորդ դարում արդարության համար հալածված ընտրյալները հարություն առնելով, ժառանգելու են Երկնքի Արքայությունը:

Ինչպես Աստծո դեմ ապստամբած հրեշտակները հալածվեցին եւ ընկան երկիր, այնպես էլ անարդարներից հալածվողներն ու տանջվողները բարձրանում են Երկինք: Նրանք հոգու աչքերով տեսնում էին Աստվածության Փառքը եւ զորանում, ինչպես մեծն Ստեփանոսը. «Ահա տեսնում եմ Երկինքը բացված...» (Գործք Է 55): Եվ Քրիստոս նրանց օգնական էր եւ հույս. Աստծո աջ կողմում Քրիստոսին կանգնած տեսնելը (Ս. Ստեփանոսի պարագայում), ըստ Տաթեւացու, օգնության գալն էր նշանակում, որով զորացած՝ նա չորս կողմից թափվող քարերը որպես վարդի ծաղիկներ էր ընդունում[63]: Բազում ձեւերով (քաղց, ծարավ, բանտ, անդամահատություն, կախաղան եւ այլն) հալածվեցին, տանջվեցին, նահատակվեցին սրբերը՝ Աստծուց ստանալով երկնային պսակներ: Ինչպես դառը դեղն է բուժում հիվան-

60 Անդ, թ. 82ա:
61 Անդ, թ. 82բ:
62 Տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, նշվ. աշխ., թ. 82 բ - 83ա:
63 Անդ, թ. 83բ:

դին, այնպես էլ հարվածներն ու տանջանքներն էին հանգցնում մեղքի ցանկության կրակը, որ կարող էր բորբոքվել բարեկեցիկ ու խաղաղ կյանքի պայմաններում[64]: Խորհրդապաշտության համար կարևոր է բացահայտել նահատակների մեջ առկա ներքին այն հոգեվիճակը, գիտակցությունն ու զորությունը, որ համբերություն էր ծնում ու անսասան կամք՝ հաղթահարելու անտանելի տանջանքներն ու տառապանքները: Սուրբ նահատակների համար երկիրը նահատակության վայր էր, իսկ երկինքը՝ պսակների[65]: Նրանց մեջ դրոշմված նեղությունների համբերության «գրամաբանությունը» հիմնված էր հոգևոր պտղաբերության ակնկալության վրա. «քանզի ինչքան շատ են նեղության ծաղիկները, այնքան ավելի կլինեն հոգևոր պտուղները»[66]:

Ը Երանության մեջ արդարության համար հալածվողները ևս անցնում են *պրաքսիսի* ճանապարհով: Տառապելով հոգով ու մարմնով՝ նրանք մի կողմից նմանվում են Քրիստոսին ու հաստատվում Ս. Հոգուն բնորոշ հատուկ առաքինությունների մեջ, մյուս կողմից՝ տանջվելով ու չարչարվելով, սրբվում են մեղքերից, մարմնական ցանկություններից ու կրքերից՝ հասնելով անկրքության ցանկալի ատիճանի: Նրանց մեջ գործում էր աշխարհին անհասկանալի թուլության-զորության ներուժը հեգեյալ գրամաբանությամբ. «Նախատում էին մեզ՝ օրհնում էինք, հալածում էին՝ դիմանում էինք, հայհոյում էին՝ աղոթում էինք» (Ա Կորնթ. Դ 11-13), որովհետև Ս. Հոգու շնորհով Աստծո որդիներ էին դարձել և դրսևորում էին աստվածամարդկային հոգեբարոյական որակներ: Իսկ այս ամենը բխում էր Աստծո նկատմամբ անդավաճան սիրո ջերմությունից. «Արդ, ո՞վ պիտի բաժանի մեզ Քրիստոսի սիրուց. տառապա՞նքը, թե՞ հալածանքը...» (Հռ. Ը 35): Ուստի, Քրիստոսի հետ միավորումը խորհրդական սիրո միավորում է՝ հարս ու փեսայի օրինակով: Իսկ Աստծո նկատմամբ սերն այս աշխարհի հանդեպ սիրո հաղթահարումն էր. «Եթե մէկը սիրում է աշխարհը, Հօր սէրը նրա մէջ չէ» (Ա Յովհ. Բ 16): Այսպես, Ը Երանին պատշաճ է վերլուծել խորհրդապաշտության բարոյագործնական ուղղության տեսանկյունից: Թեև արդարության համար հալածվող նահատակների մեջ առկա էր նաև վերջին դատաստանի, Երկնքի Արքայության հայեցությունը, սակայն նրանց սրտերի մեջ բորբոքված առ Աստված սիրո աղոթական վիճակը հարաբերվում է մտահայեցությանը կամ թեորիային:

Թ. «Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն եւ Իմ պատճառով ձեր մասին ամէն չար խօսք ստելով ասեն: Ցնծացէ՛ք եւ ուրախացէք, որովհետեւ երկնքում ձեր վարձը շատ է, քանզի այդպէս հալածեցին մարգարէներին, որ ձեզանից առաջ էին»

Հաղթելով Սատանային և փշրելով այս աշխարհի բոլոր կուռքերը՝ Քրիստոս հոգևոր «Նոր Երկնքի» արարողը դարձավ, որտեղ մարդու համար ստեղի աղքատությունը, քաղցը, սուգը, հալածանքը, խոնարհությունը դարձրեց սիրելի, խաչի փրկարար ճանապարհ, ներքին ազատագրման, ճշմարտության բացահայտման անփոխարինելի միջոցներ:

Ինչպես Ը Երանության մեջ, այստեղ ևս առկա է հոգեկան և մարմնական տառապանքներին ուրախությամբ դիմակայելու հորդորը: Սակայն այստեղ ավելի կարևորվում է հոգևոր խաչակրության ուղին: Շատ արդարներ դժվարանում էին խաչի այս ճանապարհն

64 Անդ:
65 Անդ:
66 Անդ:

անցնելուց եւ չէին դիմանում, ինչպես Երանելի Հոբը, որ վեմի պես ամուր էր, բայց երբ բարեկամները նախատում էին, զայրանում էր[67]: Ըստ եկեղեցու հայրերի՝ չարախոսությունը, նախատինքն ու բամբասանքը սրի պես խոցում են մարդու սիրտը, «նրբորեն» բորբոքում հոգու վերքերը, որոնք անբժշկելի են եւ չունեն ամոքում կամ սփոփանք:

Խորհրդապաշտության համար կարեւոր է նաեւ «Ապաշխարության լեռան» այս բարձունքը հասնել, քանի որ հոգեւոր անկրքության մեջ հաստատվելու այլ ուղի չկա: Այսպես, հարկ է հիմնավորել պրաքսիսի (ճգնավորություն եւ բարեգործություն) ընթացքի յուրօրինակ դրսեւորումները՝ ա) ճգնավորը հոգեւոր անկրքության մեջ կարող է հաստատվել այն գիտակցությամբ, որ հոգեւոր տառապանքը եւս կրքազերծում է հոգին՝ սրբագործելով եւ ազնվացնելով այն, բ) Համբերություն մարզելով իր հոգում՝ նա հաստատվում է անդրանցական հույսի ոլորտում, որը նույնպես Աստծու ներկայություն է եւ հավատքի արտահայտություն:

գ) Խորհրդական «սիրո գինով» միավորվելով Աստվածորդուն՝ Քրիստոսով զգեստավորված մարդկային հոգին ի զորու է դառնում անցնելու հոգեկան խաչակրության այս վերելքը եւս՝ ներելով ու սիրելով իրեն տանջողներին ու ցուցաբերելով հոգեւոր անկրքության եւ սիրո կատարելության լավագույն որակներ, որ միաժամանակ նրանց համար կատարված բարեգործություն էրԲարեգործության այս մակարդակը, ընդհանրապես, բնորոշ է առաքյալների, վկաների, քրիստոնյա ճգնավորների ու սրբերի կենցաղավարությանը:

Թ Երանին խորհրդանշում է նաեւ համբարձումը՝ խաչելություն-աստվածացում-հարություն հանգրվաններից հետո, որովհետեւ հալածվողը, նահատակը կամ վկան, կարծես հայտնվում է հրեշտակների Թ դասերի մեջ. «Եւ բոլոր նրանք, որ նստած էին ատեանում, նրան նայելով (Ս. Ստեփանոսին) տեսան, որ նրա երեսը նման էր հրեշտակի երեսին» (Գործք Զ. 15): Բարոյահմացաբանական տեսությամբ *թեորիան*, այստեղ, մի կողմից երկրային կապանքներից ձերբազատված մտքի հաղթական թռիչքն է առ Աստված եւ երկնային անթառամ պսակների հայեցությունը, մյուս կողմից՝ աստվածային սիրով ու խաղաղությամբ պարուրված սրտի հրավառ ճախրանքը՝ հրեշտակային օթեւաններում Աստծո Գահի առջեւ հանգրվանելը:

Թ Երանիների խորհրդապաշտական վերլուծության համար չափազանց կարեւոր է նրանց միաձույլ փոխներթափանցվածության իրողության ընկալումը:

Ըստ Գրիգոր Տաթեւացու՝ հիմնականում չորս կերպով է բացահայտվում երանիների կարգավորությունը[68]: Նախ ի դեմս Ս. Երրորդության... խոնարհությունը պատշաճ է Հոբը, որ ծնողն է Որդու հեզության: Ապաշխարության սուգը կամ սգավորությունը, որ Ս. Հոգու շնորհի ներգործության արդյունք է, ուղղված է առ Ս. Հոգի Աստված: Արդարությունը վայել է Որդի Աստծուն, քանի որ Նրա թափած արյամբ է արդարանում յուրաքանչյուր հավատացյալ: Ողորմածությունը հարմար է Ս. Հոգուն, որ ողորմածաբար բաշխում է Իր շնորհներն ու պարգեւները: Սրբությունը եւս պատշաճ է Ս. Հոգուն եւ Նրա սրբարար զորության արտահայտությունն է: Խաղաղությունը Բանն Աստծո խաղաղարար զորության պտղաբերությունն է, որը Մայր Եկեղեցին բաշխում է իր զավակներին[69]:

67 Տես **Ներսես Շնորհալի,** նշվ. աշխ., էջ 256:
68 Տես **Գրիգոր Տաթեւացի**, նշվ. աշխ., թ. 85բ:
69 Անդ: